


Այսպէս միսիօներների գործունէութիւնը ընդհանրապէս, և քրիստոնեայ կանանցը ի մասնաւորի՝ նպաստելով նեղրերի արտաքին կացութեան բարւոքմանը բարձրացնում են և նրանց ներքին, հոգեկան վիճակը։



## ԲԱՆԱՍԻԲԱԿԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ

#### II.

Հայի անցեալի եւ ներկայի մասին տեսութիւն

#### ԹՎԱՐՔ – ԹՎԱՐԱՇԽԵՐ

Խօսենք այժմ Հայաստանում ապօղ թուքք-թաթարական տարրի մասին։

Ամենահին ժամանակներից Ասիան բռնած են եղել երեք ցեղեր, որոնք գանգի, գէմքի, տիպի և ուրիշ մի քանի առանձնայատկութիւններով միմեանց հակառակ ոյժ են ներկայացրել և ընութեան տարրերի—քամու, կրակի, հեղեղի նման անցել են մի երկրից միւսը և տեղական ազգաբնակութեանը կամ ընացնուի են արել կամ ձուլուել հետք։ Այդ երեք ցեղերն են։

1) Կովկասնեան, որ և տիրապետող է հանդիսացել ամենահին ժամանակներից մերձաւոր արևելքին կամ Առաջաւոր Ասիային և Եւրոպային։ Այդ ցեղն է ստեղծել արդի եւրոպական քաղաքակրթութիւնը։

2. Մոնղոլական, որ տիրապետող է հանդիսացել Հեռաւոր Ասիային և ստեղծել է բուն չինական կամ ասիական քաղաքակրթութիւնը։

3) Մալայեան, որ ընակում է Մալայեան թերակղզում և ոչ մի համաշխարհային գեր չէ խաղացել։

Մարդկութեան այդ երեք ցեղերից երրորդը Մալայեանը իւր փոքր թուով և խաղացած չնչին դերով, մի կողմ է ընկած։ Գլխաւոր գործող և գեր խաղացողը նաև՝ կովկասեան ցեղն է իւր հնդ-երոպական և սեմիտական ճիւղերով։ Նրանք տուել են մարդկութեան մեծագոյն մասին կրօն և քաղաքացիական օրէնքներ և ունենալով կենսունակութեան ոյժ՝ տիրապետում են

ամբողջ տիեզերքին։ Եւ եթէ տեղ-տեղ առաջնութեան պատիւը մոնղոլներին է մնացել, այդ միայն առաջնուների երկը բորդական տեսդենցիաների, նեղ—ազգային, կրօնական շահերի պատճառով է, այդ հետեւանքով առաջնութեան դափնին մնացել է գեռ ասխացիներին։

Մոնղոլական ցեղը բռնում է այն երկիրները, ուր տիրապետում են ռւբալա-ալտայեան տուրանական լեզուները և հինգ խմբերի են բաժանուած)։

1) Ֆին-ոււնգարական (ֆինները, ունգարացիք, էստոնները, լիվերը, լապլանդները, չերեմիսները, մորդվանները, վատակները, պերմերը, աստեակալները, վագուլները)։

2) Սամոնդներ 20,000 հ., բաժանուած 4 բարբառների։

3) Թուրք-թաթարական խմբերը ամենաշատ տարածուածն ու բազմաթիւն են Տամկաստանում։ Եակուտ, կիրդեզ, կաշգար՝ ուռւսական թուրքեստանում և հարաւային Սիբիրում։ Թուրքմէններ, կումիկներ՝ հիւսիս արևելեան Կովկասում։ Նողաններ՝ և չուվաչներ՝ Սև ծովի հիւսիսային ափերի մօտ՝ և Խրիմում։

4) Ռուն մոնղոլական խումբ կամ իսկական մոնղոլներ, չինացիք և եապոնացիք են։

5) Տունգուզեան խումբ՝ մանջուրներ։

Ռւբալա-Ալտայեան խմբեր առանձին լեզուները միմեանցից նոյնքան են տարբերում, որքան մի և նոյն լեզուի զանազան բարբառները։ Մոնղոլական ազգերի և լեզուների զանակարգութեան գիւտը Ֆին լեզուադէտ Կաստրոնին է պատկանում։

Ազգերի մեծ դաղթականութիւնը սկսուեց Ք. յետոյ 17 դարի վերջեց։ այդ շարժման սկիզբը գրին մոնղոլ-Հուները, որոնք 372 թ. քշեցին գոթերին Սև ծովի հիւսիսային ափերից։ Ազգերի մեծ դաղթականութիւնը տևեց մինչև Կարլս Մեծը, բայց արևելքում՝ ոկզբում ոլաւեանների և ապա զարձեալ մօնղոլների ձեռքով շարունակուեց շարժումը յետոյ էլ։ Հետեւնք մոնղոլական շարժումներին։

Մոնղոլական ցեղը, որին մենք սովորաբ թուրք կոչումն ենք տալիս, կամ տուրանցի ենք կոչում, որոնք Խրանական ազգերին և երկրին տիրելու կամ երանց վերջիններից պաշտամունելու համար միշտ կուտի մէջ են եղել, կոչում է և թաթար՝ չինական թաթ կամ թաթան խոսքից, որի անունով կոչում է մոնղոլական ազգերից մէկը։ Արդ թաթ-թաթան կամ թաթար ցեղը ապրում էր Մոնղոլեացի հիւսիս արևելեան մասում և մասամբ Մանջուրիայում Խալխա, Գերուլէն և Սանգուրի գետերի ափերի ափերում, առանձնապէս Խուիր-Նորայի մօտ։

Աւրեմն թուրք և թաթար պնունները տըւում են մոնղոլական ժագումն ունեցող մի շասք ազգերի, որոնք խօսում են Թուրքական-Թուրքանական լեզուով: Մոնղոլեան ցեղին պատկանող ազգերը երկու կողմից են արշաւել գէպի արեմուտք՝ 1) Թաթարստանից՝ Սիրերի վերայով Կասպից ծովի հիւսիսային կողման և 2) Տուրանից (Խուսական Թուրքեստան) Խանի վերայով Կասպից ծովի հայրաւային կողմով: Այս պատճառով էլ Արևելեան եւրոպացիք-ռումանները իրանց վերայ արշաւող Առաջի բնակիչ մոնղոլներին՝ թուրք: Համարեա բոլոր թուրք թաթարական ցեղերը, բացի ալտայեան և սայստեան (Փին և ունդ, եակուտ, չուաշ) ցեղերից, մուսուլմաններ են և կոտպաշա: Դրանցից արևելեան մոնղոլական ազգերը, որոնք ապրում են իրենց բուն հայրենիքում, Մոնղութայի շուրջը, ունին մոնղոլական և նրան մօտիկ տիպ, իսկ արևեմտեանները՝ ոսմանցիք, ուղերէկները, Աարապատականի և Կովկասի թուրքերը, Խառնուելով կովկաստեան ցեղին պատկանող ազգերի հետ՝ ունին կովկաստեան ափայ: Թուրք-Թաթարական տէրութիւնները, մեծ մասամբ, կորճ ժամանակեայ են եղել: Իրանք թուրով՝ ընտկչութեամբ շատ քիչ, քիչ կուլտուրայով, միայն աշխարհակալութեամբ տիրապետելով իրանցից աւելի բազմաթիւ և բարձր քաղաքակրթութեամբ ազգերի, քիչ ժամանակից յետոյ կուլ են գնացել իրանցից նուաճուած ուղղերի մէջ (պարոկ, արաք.):

Այն ժամանակ, երբ մոնղոլական հորդանները սկսուում էին Արևմտեան Ասիա, քրիստոնեայ ազգերը՝ հայերը, յոյն-ըեւզանգացիք, ասորիք, վրացիք, աղուանները ևլն. միմեանց հետ մարտաման մէջ լինելով՝ առաջնութեան պատիւը տուել էին արարացոց: Իսկ մոնղոլները, մանելով Առաջաւոր Ասիա, իրերի գրութիւնը այսպէս տեսան: Մինչդեռ քրիստոնէութիւնը Ասիայի ոսհմաններում շնորհիւ նենդ ըեւզանգացոց նուազում էր և Խոլամը զօրանում՝ մոնղոլները տիրապետեցին քրիստուներին էլ խոլամներին էլ, ըալց իրանց մէջ ոյժ չդդալով իրանց նախնական կրօնը, կռապաշտութիւնը տարածելու, ընականաբար ընդունեցին նուաճուած կրօններից համեմատաբար ուժեղը և զարձան մի նոր արհաւարիք արիական-քրիստոնեայ և սեմիտական բոլոր քաղաքակիրթ ազգերի: Երբ մուսուլման արաւացիք եւրաքանչիւր երկիր մանելով վճռականապէս քաղաքակրթութեան դրգիչ և առաջադիմութեան կարապետ էին գտանում, մուսուլման մոնղոլները իսլամը նեղ մտքով հասկանալով՝ ահաւասիկ 8—900 տարի է զարձրել են այդ կրօնը

յետագիմութեան և խաւարի խորհրդանշան։ Մոնղոլական ոչ  
մաքուր բնազդներին զոհ գնացին և՝ նենդ յոյները և՝ միւս  
քրիստոնեայ ազգերը և արարացիք։ Եթէ հիւզանդիան քեւ  
զբազուէր գաւանաբանական խնդիրներով, աստուածաբանու-  
թիւնը թողնէր կրօնաւորներին և հզօր բազկով օգնութեան,  
ձեռք կարկառէր Հայաստանին, Արտաստանին շխանդարէս,  
Ազուաններին օգնէր, նաև Ասորիքը պաշտպանէր, կը կազմուէր  
քրիստոնէական որբազան լիգա։ Եթէ արտքները իրանց հեր-  
թում չը քայքայուէին, ժեղկութեան, զեղլսութեան գերկը  
չընկնէին և կրօնակից պարոկական մանր գինաստիաներին օգ-  
նէին և կազմուէր մի ուրիշ որբազան լիգա և այս լիգաները  
միահամուռ կամ զատ-զատ առաջուց խորտակէին զանազան  
Ոելջուկի, Օսմանի, Մամէլուկի, Զինդիսի, Թէմուրի քաղդատին-  
դիր արշաւանքները, քարտէզի ձեռ չէր փոխուի և Թաթար-  
ստանն ու Թուրքանը երկաթէ ճանկերով մօտ 1000 տարի չէին  
տեղափոխուի Խրանի, Միջագետքի, Փոքր-Ասիայի պաղաւէտ և  
կուլտուրական երկրները և այդ երկրների կուլտուրան չէր հա-  
ւասարուի այժմ Թաթարստանի և Թուրքանի միշտ կիսակիրթ,  
թալանի հակումն ունեցող ազգերի երկրներին։ Թէև պատ-  
մութեան անիւը դլորուելով անում է իւր քայլերն անշեղ ա-  
ռանց հաշիւ տալու ոչ ոքի և յառաջադիմութիւնը, թէև  
1000 ա. կանգ առաւ, այնուամենայնիւ նորից մուտք է դոր-  
ժելու իւր հայրենիքը։ Եւ բազացիք Առաջաւոր—Ասիայից ստա-  
ցած կուլտուրան իրանց համեմատաբար բախտաւոր պայման-  
ներում բարձրացնելով՝ նորից մատակարարում են Ասիային։  
Կամաց կամաց լուսաւորութիւնը ազատուելով կրօնական  
տենդենցիաներից իւր սեպհական հանգերձոյ մտնելու է Ասիա։  
Քայց մեր համար այն է հետաքրքիրը, որ մինչեւ նոր ազգերը  
կուլտուրական դառնան, հին կուլտուրայի վաղուց ենթար-  
կուած ազգերը զոհ կը զնան զանազան բարակ քաղաքականու-  
թեանց։ Ի հարկէ պատմութեան համար նոյնն է, քայց մեղք են և  
ափսոս հսութեան նշխարները...

Հարաւային Մոնղոլիայում Գուլգասեան թագաւորու-  
թիւնը գոյութիւն ունեցաւ VI դ.-ից մինչև VII դ., մօտ 200  
տարի։ Գուլգասոները մասամբ նուանեցին, մասամբ դուրս  
արին Ասիայից աւարներին, որոնք VIII դ. անհանդստացնում  
էին նոյն իսկ ֆրանսիացոց։ Գուլգասեանց թագաւորութիւնը  
փոխուեց Ոյգուրեանի, որը գոյութիւն ունեցաւ Միջին Ասիա-  
յում և Մոնղոլիայում VIII դ.-ից մինչև XIII դ. Քայց այդ  
շրջանում (XI դ.) թաթ կամ թաթար ցեղը նուաճուեց տուն-  
դուղներից և սկսեց տեղափոխուել հարաւարեկմտեան Մոն-

զոլիս: Ամուղարիայի տփերում Ելիկ-խաների կամ Դարախտաների թագաւորութիւնը իւր Բուխարա մոյքրաքաղաքով շարունակուեց Հ և XI գարերում: Այժմեան Բուխարայի խանութիւնը դոյութիւն ունի այդ անունով XV դարից սկսած:

Խորեիզեան թագաւորութիւնը, որ գոյութիւն ունէր Խիւայ մայրաքաղաքով, տևեց XI—XIII գարը: Այժմեան Խիւայի խանութիւնը գոյութիւն ունի այդ անունով XIII դ. մինչև մեր օրերը. Սեղուկեան թագաւորութիւնը (Թուրքմէնական—թուրքական—թուրանական)՝ մոնղոլական ցեղի մէջ այն հրոսակալումքն է, որը իւր նախնական առաջնորդին—Սեղուկին հետեւելով ամենից առաջ է մտնում Առաջտառը—Ասիա: Սըայաջորդ Տուղրիւ-բէկը միացնում է Պարսկաստանից մինչև Հնդկաստան եղած 7 պետութիւնները, նուաճում է Պարսկաստանը, վերջնական հարստած է տալիս արաբացւոց և բիւզանդացւոց և հիմն գնում նոր պարսկական պետութեան: Սեղուկերը Տուղրիւ-բէկի, Ալֆառաւանի և Մելիք-Շահի Ժամանակ տիրապետում են բուն Պարսկաներին, ընդունում Խոլամը և կազմում նոր-պարսկական ազրը: Սեղուկների մի արշաւախումը անցնում է Փոքր—Ասիա-Խոնիա: Միաժամանակ մինչ սեղուկները տիրապետում էին Պարսկաստանին, Միջագետքին, Փոքր Ասիային, Հայաստանին, Սիրիային, Ազուանստանին և Միջին Ասիային—մոնղոլական մի նոր շարժում սկսուեց XII—XIII դ. Միջին—Ասիայից դէպի Իրան, Զինկիզ-խանի առաջնորդութեամբ: Զինկիզ-խանի մօտաւոր ազգականներից Բարգին XIII դ. աւելից և Խուսաստանը և սպանում էր Եւրոպային, բայց Զեխիայում պարտութիւն կրելով յետ դարձու: Վալէայի տփերում հիմնեց Զօլոտոյա օրդան-մի արհաւերք ուուների համար, որը տևեց XIII—XVI դ. և մօտ 300 տառաւնները այն գրութեան էին, ինչպէս հայերը XII մինչև XX դ. ուղեղ 900 տ.: Խուսաների քաղցից Զօլոտոյա օրդաններին նատքեցներից սկսեց թուլանալ և մի հզօր պետութեան փոխարէն երեացին Ղազանի, Աստրախանի և Խրիմի անկախանութիւնները, որոնք միմեանց մէջ անդադար գինաստիական հաշիւներ ունենալով, հեշտացրին Մոսկվայի հեռատես Խօաններին և Վասիլներին հաւաքելու ռուս ազգին իրանց գայիսոնի ներքոյ և մոնղոլների տիրապետութեանը վերջ առէին: Միայն Մոսկվայի և ապա ռուսական պետութիւնն ու ազգը իւր մէջ շատ մոնղոլական հետքեր էր կրում, չնոյելով ահա 1000 տ. աւելի է քրիստոնէութիւնը տիրում է այդ ազգին և Երկրին: Խուսաստանի համար քրոնիքական հիւանգութիւն էր արտաքուստ պետութեան եւրոպական ձև ստանալը և ներ-

քուստ ժողովրդի խաւար գըռութեւնը, որի պատճառով ինչպէս Մոսկվայի պետութեան մէջ, այնպէս էլ կայսրութեան օրով երեան էին գալիս զանազան Ստենկա Քազին, կազակների անկարգութիւններ (ամուսնուէ վրեմիս), պաւաչնչչնա, յեղափոխական շարժումներ ևայլն:

ԱԵՂՈՒԿԵԱՆ-ԱՐԱՐՈՒԿԻՆՆԵՐԻ հետ հայերի դլիսին նոր պատճենաս եղան Զինգիս-խանի հրոսակաթմբերը, որոնցից մի քանիոք Չարմաղան զօրսապետի առաջնորդութեամբ մասն Հայուստան և Կովկաս, տիղական ազգերին նուաճեցին, նրանց հետ խառնուեցին և կազմուեց Կովկասեան ոյժմեան թուրք-թաթարական ազգերի զանգուածը (իրաքը թուրք մննդոլներ, մեծաւ մասամբ երկիւզից թուրքացած, խոլամութիւն ընդունած հայեր, աղուաններ, վրացիք և լու.)։ Ազգերի այդ խառնութողութեամբ է Երևանի, Թէֆլոնի, Գանձակի, Բաղուի, Դաղստանի, Զակաթալի երկրները։ Զինգիս-խանը վերջնականապէս ջնջեց Աղուան ազգը և խիստ փոքրացրեց հայկականը։

XIII դ. (1225 թ.), Զինգիս-խանի արշաւանքների հետ համարեաւ միաժամանակ Խիրատ գետն անցնուած է թուրքմէնական-թուրքական ցեղից մի խումբ 50,000 հոդուց բաղկացած և ըռնուած Հայուստանի հարաւային մասը. ապա այդ խառնը անցնուած է Սուլեյմանի առաջնորդութեամբ գէպի արևմուտք և նրա որդի Էրդուղիմի առաջնորդութեամբ մըտնուած Խիրնիստ։ ԱԵՂՈՒԿԵՆՆԵՐԻ Առւլիթան Ալա-Էկաբինը Երդուղիի ընդունուած է իւր ծառայութեան մէջ և թուրքերին տեղ տալիս իւր երկրուած։ Էրդուղիլի ոչդին Օսմանը 1288 թ. Սուլթանի տիտղոս է ընդունուած և իւր հետ հկած ժողովուրդը իւր անունով Օսմանլի է կոչւուած։ Օսմանի յաջորդները XV դ. տիրապետուած են և Պօլսին էլ և թուրքմէնական ըոլոք ցեղերը միացնելով կազմուած են այժմեան օսմանեան պետութիւնը։ Մոնղոլական նոր հսուանքը դրանով չէ վերջանուած։ XIV դ.—XV դարը տեւեց Թէմուրլակնի կոմ Լոնկ-թամուրի կայորութիւնը, որ աւելի ոյժ տուեց մննդու ցեղի գէպի արևմուտք գնացող յորձաննը։

Թէմուրի թագաւորութեան անկումից յետոյ ոկոււեց Բաշրուրեան կոմ Մէծ Մոգոլի խոնութիւնը, որ գոյութիւն ուներ Հնդկաստանի հիւսիսային մասուած XVII մինչեւ XIX դարը։ Կոկանաի խանութիւնը XVIII դ.-1875 թիւը։ XVIII դարի վերջուած Աղա Մահամեդ խանը Պարսկաստանուած հիմնեց նոր հարստութիւն, որ տիրուած է այնտեղ մինչև այժմ։ Այդ հարստութեան պատմութիւնը այս է։ Թուրքմէնական ցեղերից մէկը, Դաճար անունով, որ ապրուած էր Երևանի նահանգուած և Ատքը-

պատականում, ինչպէս վերն առացի, Մահամմէդ խանի առաջնորդութեամբ տիրում է Պարսկաստանին:

Ինչպէս տեսանք և գիտենք Հայոց մասին գրածից մոնղուական ցեղերի արշաւանքը գէպի Առաջաւոր Առիտ և մամնաւորապէս գէպի Հայաստան կրկնուել է պարբերաբար XI դարից սկսած, և հետեւեալ կարգով.

1) Տուղթի բէկի առաջնորդութեամբ՝ Սելջուկներ.

2) Սուլէյմանի » Օսմանցիք

3) Զինդիզ-խան

4) Լանկթամուր:

Քրանցից զատ Հայաստանը աւերուել է Նոր-պարսկական և Թուրքական փոխադարձ կռիւներից, գրանց ձեռքով և զըրդմամբ քիւրդերից և Թուրքմէնական զանազան խաներից, որոնք հետզհետէ աւելանում էին հայկական հորիզոնում: Նուազում, այլասեռում, անյայտանում՝ էին հայկական քնիկ տէրերը սպանուելով, տեղափոխուելով, և կրօնափոխ լինելով: Արանց փոխարէն մոնղոլական յորձանքների ժամանակ ինչպէս տականք մնում էին նրանց խաները, ըէկերը և ազնուականները: Բուն հայկական ազնուականութիւնը տեղի տուեց օտարազգի ազնուականութեան: Այդ ստրկութեան կամ խաւարդարերում (XII—XIX) մի քան, որ մնում էր անսաստն և զեռզօրանում էր, այդ հայոց հոգեսրականութիւնն էր: XV դարում հոգեոր կետրոնը հեռաւոր Կիլիկիայից նորից տեղափոխուեց և հաստատուեց հայկական հին մայրաքաղաքներից մէկում, Վաղարշապատում: Այս զուտ քաղաքական ակտը Ա. Քրիգորի երազի հետ կապելով, նրան կրօնական գոյն տալով, հոգեսրականութիւնը ոկտե ամենայն հայի ուշ ուշ միսքը դէպի Արաբատեան աշխարհը դարձնել:

Ինչպէս Ռուսոց ստրկութեան կամ խաւար դարերում Մոռկան միապետութեան դայիսոնով հաւաքեց ուստին և վանեց մոնղուին, իջմէածինն էլ Ա. Լուսաւորչի հայրապետական դաւազանի տակ հաւաքեց հայերին և ուստիների օդնութեամբ վերականգնեց հայկական աղբաբնակութեան բարդաւաճումը հիւսիսային Հայաստանում:

Եկատերինեան դարի յունական ծրագրի հետ ծանօթ էին Սիմէօն կաթուղիկոսը և հայ ազգը: Հնդկաստանի հայերը, դեռ Պետրոս Մեծի նախորդների հետ կապել էին ծանօթութիւնն Ռուս կառավարութիւնը և հայ հոգեսրականութիւնը միմեանց հետ մերձեցման շատ յենակէտներ ունէին: Ռուսաց կառավարութիւնը աչքի առաջ ունենալով հայի հազօրդիչ յատկութիւնը և Հայաստանի վերականգնուելու խոպառ անհնարաւու-

բութիւնը (բնակչութեան քաղմազան լինելու պատճառով) հայերին, որպէս որք ազգի, դաւրգուրաց, օգտուեց նրանց արեւելքի հետ ունեցած ծանօթութիւնից և XIX դարում հայերի աջակցութեամբ նուանեց Հայաստանը, որ Պարսկաստանի մի մասն էր դարձել, այն երկրում, ուր 800 և աւելի տարիներ կիսալուսինն էր թագաւորել՝ խաչը սկսնել էր նուանումներ անել: Տաճկական Հայաստանի մահմեդական ազգաբնակութիւնը ընկնում է հոգութիւնը և մտատանջութեան մէջ: Նա մտածում էր, որ հայ ազգը աջակցում է ոռւս կառավարութեանը նրա արշաւանքների ժամանակ որպէս հաւատական ազգական մէջ: Նա մտածում էր կիսալուսինն իրանց հայութեան մէջ: Հայերը իրեւ բազմագարեան հին ազգ ու կուլտուրապէս աւելի հասուն, կարող են իրանց հաւատական մէջ: Հայերը իրեւ բազմագարեան հին ազգերն էին, և համել քաղաքական անկախութեան կամ աւելի շուտ կըլերական գույքներն էին Հայաստանը: Ուրեմն պէտք է ամեն ջանք գործ դնել խափանելու ամենայն տեսակ հաւատականութիւն, որը այդ երեական այս լինէր. և թուրք կառավարութիւնը որոշ քաղաքականութեամբ պարբերաբար մեռցնում էր հայութիւնը Հայաստանում: Մինչև 80-ական թուականները թուրք-թաթարական տարրը Հայաստանի գոյութեան շարունակութեան մասին մտատանջուելու շատ տեղիք ունէր:— Հայերի հոգեոր ինքնավարութիւնը պոլտենիէի հիման վերայ հաստատուն էր: Տէրութիւնը իւր հիմնական քաղաքականութիւնը գէպի հայերը և սրանց միջոցով Փոքր—Ասիայում իւր գերեշխանութիւնը հաստատելու գաղափարը անխախտ էր պահում: Բայց 80-ական թուականներից, «ոռւսաց պետութիւնը ոռւս ազգի համար» քաղաքականութիւնն է ոկտումբեմ: Այս քաղաքականութիւնը հետևանը էր բալկանեան ազգերի և յատկապէս ըռւլգարների վերաբերութեամբ հիասթափութեան: Քաղաքականութեան հետ փոխում է ոռւս կառավարութեան յարաբերութեան ձեւը գէպի օտարազգի և այլակրօն հպատակները: Ոկտումբեմ են իրաւունքների և արտօնութիւնների կըճատումները: Գալիցինի կառավարութեան յայտնի անբարեացակամութիւնը գէպի հայերը չէին կարող չընկատել Տաճկաստանը և «պանիուլամով» ողերուող մահմետականները, որոնք ամբոխի մէջ զարթեցրին հին հին շատակներ, մտածեցին հաշիւը հայերի հետ մաքրել, և անսպասելի կերպով սկսուեց Կովկասում հայ-թուրքական կոլիւը, որ տևեց ամբողջ երկու տարի:

Հայ-թու բքական բնդհարումները քննողները մեծ մասամբ այն միտքն են յայտնում, թէ այն մի ըովէական ըռնկումն էր, թէ երկու ազգերն էլ սիրով և բարի հարեաններ են եղել: Այն մենք հարեաններ ենք. սայց թուրքը թուրք է և մահմետական այն գիտակցութեամբ, որ լնքն ոչ շատ ժամանակ առաջ ախրող ազգ էր, իսկ այժմ հայելի շնորհիւ ու լիշի հպատակ է գարձել. հայը հայ է և քրիստոնեաց այն գիտակցութեամբ, որ գարեր ճնշուած, հալածուած և արհամարհուած է եղել թուրքից: Հայը արեական՝ իսկ թուրքը մոնղոլականի ցեղական հակումներ ունի:

Բարեբազգաբար, Կոմս Վորոնցով-Դաշկովը իբրև վոլխաբքայ հասնելով կովկաս, Ժողովից իւր մատ հայ և թուրք ազգերի ներկայացուցիչներին. թոյլ տուեց նրանց քննել ընդհարումների առիթները, և մի կարճ ճառավ ցայց տուեց ուղիղ ճանապարհը: Նա սասաց. թուրք տարրը իբրև աւելի քէջարգացած՝ աւաղակային հակումներ ունի. հայ տարրը համեմատաբար աւելի զարգացած՝ հակամէտ է յեղափոխական շարժումներին: Երկու տարբերն էլ իբրև մի տէրութեան հպատակ պէտք է հնագանդնեն տիրող օրէնքներին. զանցառուները կը պատժուեն օրէնքի բուլոր խստութեամբ. պէտութիւնը երկրի մէջ խաղաղութիւն է ցանկանում. Խաղաղութիւն վրդովոզները կը պատուհասուեն անխնայաբար: Եւ հայն էլ, թուրքն էլ խաղաղուեցին: Մնում է այժմ մի բան. որ հայն էլ, թուրքն էլ և կովկասնեան բոլոր ազգերն էլ ճանաչեն իրանց ռուս պետութեան քաղաքացի հաւասար իրաւունքով. բոլորը միասին սիրեն Ռուսաստանն ու Կովկասը իբրև իրանց ընդհանուր հայրենիք. այնուհետև իւրաքանչիւրը իւր ցեղական հակումների համեմատ աշխատեն ընդհանուր հայրենիքի, իրանց ցեղական համայնքների և իրանց անհատական բարօրութեան ու տնտեսական զարգացման համար \*:

#### Վ.րբ. Ֆեյ. Մարգարեանց

\* ) Այս յօդուածի աղբիւրներն են՝

1) Բրոկհաւուզի ճանրագիտական բառարան

2) Գարագաշեանի Հայոց բննական պատմութիւն

3) Եղպատեւսկու Ռուսաց պատմութիւն եւ

4) Բենիամինովի ընդհ. պատմութիւն: